EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԵԴԻԳԱՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 56126/17)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

18 հունվարի 2024թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Եդիգարյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović]՝ *Նախագահ,*

Անյա Զայբերտ Ֆոա [Anja Seibert-Fohr],

Էն Լուիս Բորմանն [Anne Louise Bormann]՝ *դատավորներ*,

եւ Վիկտորյա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

2023 թվականի դեկտեմբերի 14-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2017 թվականի հուլիսի 26-ին Դատարան ներկայացված գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ա. Ղազարյանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ծանուցվել է գանգատի մասին:

ՓԱՍՏԵՐԸ

4. Դիմումատուի՝ գանգատի համար նշանակություն ունեցող տվյալները եւ տեղեկությունները ներկայացված են կից աղյուսակում:

5. Դիմումատուն բողոք է ներկայացրել անօրինական կալանքի վերաբերյալ: Նա նաեւ բողոք է ներկայացրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

6. Դիմումատուն բողոք է ներկայացրել անօրինական կալանքի վերաբերյալ (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս կից աղյուսակը): Նա հիմնվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի վրա:

7. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն իր բողոքը ներկայացրել է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված վեցամսյա ժամկետի ավարտից հետո:

8. Դատարանն այս առնչությամբ նկատում է, որ դիմումատուի՝ դատավարության ընթացքում իր կալանքի անօրինականության վերաբերյալ բողոքը վերաբերում է շարունակական իրավիճակի, որն սկսվել է 2015 թվականի մայիսի 21-ին, երբ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանն անփոփոխ է թողել դիմումատուի կալանքը՝ առանց որեւէ ժամկետ սահմանելու, եւ ավարտվել է, երբ գործը քննող դատարանը նրան դատապարտել է 2017 թվականի հունվարի 26-ին: Դիմումատուն իր բողոքը ներկայացրել է իր դատապարտման օրվանից վեց ամսվա ընթացքում (նմանատիպ պատճառաբանության համար տե՛ս Պոպովիչն ընդդեմ Ուկրաինայի գործը [Popovych v. Ukraine], թիվ 44704/11, §§ 30-34, 2021 թվականի ապրիլի 22): Ուստի Դատարանը մերժում է Կառավարության առարկությունը: Այն այնուհետեւ նշում է, որ դիմումատուի բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ, ո՛չ էլ անընդունելի որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

9. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխանելու համար խնդրո առարկա կալանքը պետք է տեղի ունենա «օրենքով սահմանված կարգով» եւ լինի «օրինական»: Կոնվենցիան այս դեպքում, ըստ էության, հղում է կատարում ազգային իրավունքին եւ ամրագրում ազգային իրավունքի նյութաիրավական եւ ընթացակարգային կանոններին համապատասխանելու պարտավորությունը, սակայն ի հավելումն պահանջում է, որ ցանկացած ազատության սահմանափակում համապատասխանի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ անձին կամայականությունից պաշտպանելը (տե՛ս *Հաչիսոն Ռիդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Hutchison Reid v. the United Kingdom*], թիվ 50272/99, § 47, ՄԻԵԴ 2003 IV, *Ասանիձեն ընդդեմ Վրաստանի* [ՄՊ] [*Assanidze v. Georgia* [GC]], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004 II, եւ *Վասենինն ընդդեմ Ռուսաստանի* [*Vasenin v. Russia*] թիվ 48023/06, § 108, 2016 թվականի հունիսի 21): Դատական մարմինների կողմից երկարաժամկետ կալանքի թույլատրման որոշումներում տրված որեւէ հիմքի բացակայությունը կարող է անհամատեղելի լինել 5-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված կամայականությունից պաշտպանելու սկզբունքի հետ (տե՛ս *Ստաշայտիսն ընդդեմ Լիտվայի* [*Stašaitis v. Lithuania*], թիվ 47679/99, § 67, 2002 թվականի մարտի 21, *Նախմանովիչն ընդդեմ Ռուսաստանի* [*Nakhmanovich v. Russia*], թիվ 55669/00, § 70, 2006 թվականի մարտի 2, եւ *Ելոյեւն ընդդեմ Ուկրաինայի* [*Yeloyev v. Ukraine*], թիվ 17283/02, § 54, 2008 թվականի նոյեմբերի 6):

10. *Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի* [*Vardan Martirosyan v. Armenia*] (թիվ 13610/12, 2021 թվականի հունիսի 15) նախադեպային գործում Դատարանն արդեն հայտնաբերել է խախտում՝ կապված սույն գործում առկա նմանատիպ խնդիրների հետ:

11. Դատարանը, ուսումնասիրելով իրեն ներկայացված բոլոր նյութերը, չի հայտնաբերել սույն բողոքի առնչությամբ այլ եզրակացության հանգելու համար համոզիչ որեւէ փաստ կամ փաստարկ: Հաշվի առնելով այս հարցի առնչությամբ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը համարում է, որ սույն գործում Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի

2015 թվականի մայիսի 21-ի որոշումը դիմումատուին չի ապահովել կամայականությունից պատշաճ պաշտպանություն, որը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով օրինականության հիմնական տարրերից է, հետեւաբար 2015 թվականի մայիսի 21-ից դիմումատուի կալանքը չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

12. Հետեւաբար սույն բողոքով բացահայտվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ՄՅՈՒՍ ԲՈՂՈՔՆԵՐԸ

13. Դիմումատուն նաեւ փոխկապված լրացուցիչ բողոք է ներկայացրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն: Դատարանը, քննելով իր մոտ եղած բոլոր նյութերը, եզրակացնում է, որ արդեն բացահայտել է սույն գործի հիմնական իրավական խնդիրը (տե՛ս վերեւում՝ 11-րդ եւ 12-րդ պարբերությունները), եւ համապատասխանաբար կարիք չկա սույն բողոքն առանձին քննարկելու (տե՛ս *Իրավական ռեսուրսների կենտրոնը՝ ի դեմս Վալենտին Կամպեանուի ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [Centre for Legal Resources on behalf of Valentin Câmpeanu v. Romania [GC]], թիվ 47848/08, ՄԻԵԴ 2014):

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

14. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը (տե՛ս մասնավորապես վերեւում հիշատակված՝ *Վարդան Մարտիրոսյանի* գործը), ողջամիտ է համարում շնորհել կից աղյուսակում նշված գումարները:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն բողոքն ընդունելի եւ գտնում է, որ անհրաժեշտ չէ առանձին քննել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն դիմումատուի մյուս բողոքը.

2. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմումատուի անօրինական կալանքի առնչությամբ.

3. *Վճռում է, որ*՝

ա) պատասխանող պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի կից ներկայացված աղյուսակում նշված գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով,

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2024 թվականի հունվարի 18-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Վիկտորյա Մարադուդինա	Ֆարիս Վեհաբովիչ
Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար	Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված բողոքներ պարունակող գանգատ

(անօրինական կալանք)

Գանգատ թիվ **Ներկայացման ամսաթիվը**	**Դիմումատուի անունը** **Ծննդյան տարեթիվը**	**Ներկայացուցչի անունն ու գտնվելու վայրը**	**Անօրինական կալանքի ժամկետը**	**Կալանքի մասին որոշումը կայացրած դատարանը**	**Հատուկ թերությունները**	**Դիմումատուներից յուրաքանչյուրին ոչ նյութական վնասի դիմաց շնորհվող գումարը** **(եվրոյով)**[1]	**Յուրաքանչյուր գանգատի մասով ծախսերի եւ ծախքերի դիմաց շնորհվող գումարը** **(եվրոյով)**[2]
56126/ 17 26 հուլիսի 2017թ.	Սեմիոն ԵԴԻԳԱՐՅԱՆ 1989թ.	Ղազարյան Արա Երեւան	21 մայիսի 2015թ.-26 հունվարի 2017թ.	Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան	Կալանքը թույլատրող որոշման մեջ դատարանի կողմից տրված որեւէ հիմքի բացակայություն, առանց ժամկետի կալանքի որոշում	4,000	250

[1] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:
[2] Գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ: